(= 1818)»։ Ինչպէս նաև Գեթսեմանիի Ս. Աստուածածնի տաճարին համար արծաթեայ խոշոր կանթեղ մը, նոյն թուականով և նոյն յիշատակարանով։ (Ցուց. Պ.)։

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԱՌԱՔԵԼԵԱՆ, Ղ.ԱՐԱՊԱՂՅԻ. — Խմբագիր Մշակի. հրատարակած է այլ և այլ պատմական և բանասիրական գրուածներ. բազմաթիւ յօդուածներ գրած է Մշակի եւ Մուրճի մէջ. ունի նաև ազգային վէպեր։ 1893 Օգոստոսին այցելած է Ս. Ցակոբի վանքը, Թիֆլիսի Լիտոֆ ռուսերէն լրագրին խմբագիր հայազգի Խաչատուրեանի հետ, իբր Պարսկաստանի եւ Հնդկաստանի թեմի պատգամաւոր. հրատարակած է Խրիմեան Հայրիկի Կաթողիկոսական ընտրութիւնը անուամբ գիրքը։ "Les Rapports des Arméniens avec l'Occident au moyen âge et après» վերնագրով իր յօդուածը 1902 Սեպտ.ին, գրկած է Արեւելագէտներու ԺԴ. միջազգային ժողովին որ գումարուած է Համպուրկի մէջ։ Այդ յօդուածին թարգմանութիւնը տեսնել Մուրճ, 1902 Թիւ 10։ Ներկայ գտնուած է նաեւ նոյն ժողովին ԺԴ. նիստին Ալժիէրի մէջ, իր զեկուցումը եղած է Ակնարկ Հայ գրականութեան վրայ եւ նրա ուսումնասիրութեան կարեւորութիւնը արեւելագիտութեան համար։ Իր հրատարակութեանց մանրամասն ցուցակը տեսնել (Ղազիկեան, էջ 197—198)։

1917 ին Համբարձում Առաքելեան իր տանը մէջ կ'սպաննուի մեզի անծանօթ պատճառով մը։

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԵՐԱՄԵԱՆ, Վանեցի.— Ծ. 1857 Մայիսին. աշկ. Ցայնկոյսներու եւ Ս. Ցակոբի ազգ. վարժարաններուն (1866—74). 1868ին ծաղկի հիւանդութեամբ կը զրկուի իր աչքերու լոյսէն 11 տարեկանին. ուսումը շարունակելէ վերջ 1874էն սկսեալ դասատու կը կարգուի հայերէնի և պատմութեան Վանի երկու վարժարանաց մէջ. 1880—81 տեսուչ Կարմրուր վանքին որբանոցին, 1882ին կը հիմնէ գիշերօթիկ-ցերեկեայ վարժարան մը եւ կը շարունակէ զայն մինչ 1915 կարող ուսուցչական խումբով մը եւ աշակերտներու թոչակներով միայն։

Նոյն վարժարանը 1908 ին կը ճանչցուի իբր իտսսի. 1904 ին կատարած է իր վարժարանին 25ամեակը, այդ առթիւ Երամեանի աշակերտք եւ կրթասէր ազգայիններ նոյն վաստակաւոր ուսուցչին կը նուիրեն դպրոցական չէնք մը և բնակութեան տուն մը։